ՀՏԴ 37.02:74

Հեքիաթի ձևավորման պարապմունքները՝ որպես դպրոցական ստեղծագործական ունակությունների ձևավորման միջոց

Մարինե Ղալայանց

Հանգուցային բառեր. *գեղագիտական, դաստիարակություն, հույզեր, դերային հեքիաթ, սյուժետային, երևակայություն, սոցիալականացում, վարք*

Նախաբան

Երրորդ հազարամյակը գիտական տարաբնույթ խնդիրների լուծման այլընտրանքային ճանապարհների լայն հնարավորություն է ընձեռում:

Խնդիր է դրվում, թե ներկա պայմաններում, առանց լրացուցիչ ուսուցման, որքանով է հնարավոր արդյունավետ գեղագիտական դաստիարակություն իրականացնել:

Սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացմանն ու ձևավորման հիմնախնդիրներին են անդրադարձել ինչպես այլազգի (Լ. Վիգոտսկի, Ա. Լեոնտև, Վ. Կուզին, Ն. Ռոստովցև, Ս. Բակուշինսկի), այնպես էլ հայ մանկավարժներ (Ա. Ա. Բալյան, Լ. Ս. Ներսեսյան, Մ. Մանուկյան, Լ. Ասատրյան, Յ. Յուզբաշյան), որոնց աշխատանքներում դիտարկվում են դպրոցականների գեղարվեստական գործունեության ներքին օրինաչափություններն արվեստի տարբեր ոլորտներում:

Սույն հոդվածի **նպատակն** է ի ցույց դնել կերպարվեստի դասավանդման բնագավառում ձեռք բերված փորձը, կիրառվող մեթոդների արդյունավետությունը՝ ուշադրության կիզակետում պահելով կերպարվեստի ներհյուսված ուսուցումը սովորողների ստեղծագործական կարողությունների ձևավորման գործընթացում:

Ուսումնասիրության գիտական նորույթն է կերպարվեստի ներհյուսված ուսուցման շնորհիվ գեղարվեստական գործառական դաշտի պայմանների ապահովումը՝ ի տես սովորողների ստեղծագործական կարողությունների ձևավորման:

Երեխայի զգացմունքների ձևավորման ազդակները

Երեխային շրջապատող աշխարհը վիթխարի է և բազմադեմ: Սակայն մենք հաճախ չենք կարողանում լիովին գնահատել, ավելի ճիշտ՝ թերագնահատում ենք այն ազդեցությունը, որ գործում են երեխայի զգացմունքների ձևավորման վրա առօրյա իրադրությունները, գրքերը, բնությունը, արվեստի գործերը:

Երեխան օժտված է շրջապատող աշխարհով զարմանալու անչափ արժեքավոր ընդունակությամբ, նրբազգացությամբ և գնահատմամբ:

Երեխաների գեղարվեստական մտածողության, ստեղծագործական երևակայության զարգացման մեծ հնարավորություններ ունեն ժողովրդական հեքիաթների թեմաներով կատարվող պատկերագրումները: Ուսուցիչը կարդում է որևէ հեքիաթ, ապա առաջարկում է երեխաներին պատմել լսածը՝ ուշադրություն դարձնելով հերոսների արարքների վրա: Այնուհետև տրվում են հարցեր, օրինակ՝ ո՞րն է նրանց կարծիքով ամենից շատ սիրելի և ինչո՞ւ: Պետք է օգնել, որ երեխան հեքիաթը լսելուց կամ կարդալուց հետո կարողանա վերլուծել այն և վերարտադրել թղթի վրա: Դա ձևավորում է երեխայի պատկերավոր մտածողությունն ու երևակայությունը: Երեխան փորձում է դրանք պատկերացնել ու նկարել իրենց որոշակի հաջորդականությամբ: Այդ ամենը երեխայի մեջ մշակում է դիտողականություն, առանձնահատուկը նկատելու, ճանաչելու և իմաստավորելու կարողություն, ինչպես նաև հիշողության ամրապնդում:

Դպրոցականների ստեղծագործական գործունեության կարևոր տեսակներից մեկը հենց հեքիաթի նկարազարդումն է: Այն սովորողի հոգեկան աշխարհում որակական փոփոխություններ է առաջացնում: Հեքիաթի պատկերագրման գործընթացում ձևավորվում են ստեղծագործական գործունեության հիմքերը, որոնք առաջատար են դառնում դպրոցական տարիներին: Հասարակության մեջ իրենց յուրահատուկ տեղը ունենալու համար երեխաները դերային հեքիաթներ են խաղում: Նրանք իրենց հեքիաթներում ընդգրկում են մեծահասակների կերպարներ, շարժումներ ու վարվելաձև, որոնք մեծահասակների կյանքին հաղորդակից լինելու յուրահատուկ ձև են: Հեքիաթի պատկերագրման ընթացքում երեխայի մեջ առաջին անգամ ի հայտ է գալիս մարդկանց միջև գոյություն ունեցող օբյեկտիվ հարաբերությունների գնահատման ընդունակություն: Նրանք սկսում են հասկանալ, որ իրական գործողություններին մասնակցելը մարդուն տալիս է որոշ իրավունքներ և պահանջում է իրականացնել որոշ պարտականություններ: Օրինակ՝ եթե երեխան գնումներ է կատարում, ապա նա իրավունք ունի և կարող է ուշադիր զննել ապրանքը, նկատողություն անել իրեն չբավարարող սպասարկման և անփութության համար: Հեքիաթի բովանդակային դերի կատարման էությունը հենց բեմականացման մյուս մասնակիցների նկատմամբ այդ դերով պահանջվող պարտավորությունների կատարումն ու իրավունքների իրականացումն է, որն էլ երեխային կարգապահ ու պատասխանատու է դարձնում: Համատեղ աշխատանքի ժամանակ դպրոցականները սովորում են

միմյանց հետ համաձայնեցնել իրենց գործողությունները, նաև զարգանում է երեխաների ինքնագիտակցությունը: Խմբի մյուս անդամների կարծիքը երեխայի մեջ ձևավորում է նրբազգացություն, ինքնուրույնություն, խմբային պահանջներին հետևելու ընդունակություն, որը և երեխաների հանրույթի ձևավորման գործընթացն է:

Ամեն ոք սովորում է իրեն պահել հեքիաթային իրադրությանը և պահանջներին համապատասխան՝ պահպանելով սեփական անձի յուրահատկություններն ու ինքնուրույնությունը: Այս ամենից ելնելով՝ կարող ենք ասել, որ հեքիաթի պատկերագրումը դպրոցականի մեջ ձևավորում ու ամրապնդում է անհատական վարք: Այդ ընթացքում նրա մեջ ձևավորվում է ստեղծագործական կարողություն, նաև գիտակցություն առ այն, որ ինքը կարող է իրական առարկաներն ու երևույթները փոխարինել այլ խորհրդանշաններով ու կերպարներով:

Ղ. Աղայանը նշում է. «Կյանքի այս փուլում հեքիաթը ըստ էության խորհրդանշական բնույթ է ստանում: Նման բնույթի հեքիաթները դպրոցականի հոգեկան զարգացման գործընթացում ստանում են էականորեն դրական նշանակություն: Խորհրդանշանների օգտագործումը օգնում է սովորողին հետագայում ապահովելու գեղարվեստաստեղծագործական գործունեության արդյունավետությունը» [2, 116]:

Հեքիաթի նկարագարդման նշանակությունը երեխայի կյանքում

Հեքիաթի նկարագարդման գործընթացը նպաստում է նաև կամածին ուշադրության զարգացմանը: Պատկերագրման ժամանակ երեխաները ավելի են կենտրոնանում և ավելի շատ գիտելիքներ են մտապահում, քան միայն գրական տեքստն ընթերցելիս, այսինքն՝ զարգանում է հիշողությունը ևս:

Հեքիաթ պատկերագրելու ընթացքում ավելի վաղ ու հեշտությամբ է դրսևորվում ուշադրությունը կենտրոնացնելու, մտապահելու և մտաբերելու գիտակցված նպատակը: Հեքիաթների նկարագարդման գործընթացի պայմանները ստիպում են, որ երեխան ուշադրությունը կենտրոնացնի ստեղծագործական իրադրության մեջ մտնող առարկաների, երևույթների, կատարվող գործողությունների վրա:

Հեքիաթի ընթերցումը և պատկերագրումը, ինչ խոսք, մեծ ազդեցություն է գործում նաև խոսքի զարգացմանը: Այս գործընթացում սովորողը հաղորդակցման մեջ է մտնում շրջապատի իրականության հետ, ընդլայնում գեղագիտական իր ընկալումները, ստեղծագործական երևակայությունն ու հուզազգացմունքայնությունը:

Հեքիաթների նկարագարդումները լուրջ ազդեցություն են գործում

ստեղծագործական ունակությունների ձևավորման վրա, որի ընթացքում դպրոցականը կարողանում է հասնել առարկաների ու երևույթների ընդհանրացմանը և արտացոլում է առարկաների այդ ընդհանրացված նշանակությունը:

Մտավոր գործողությունները սկզբնական շրջանում հենվում են իրական առարկաների վրա: Առարկաների հետ գործողություններ կատարելիս, նրանց նոր անուններ տալով և նոր գործառույթներ վերագրելով՝ դպրոցականները աստիճանաբար անցնում են ներքին, բուն իմաստով մտավոր գործողությունների կատարմանը: Պատկերագրման գործողությունների ընդհանրացումը հիմք է դառնում մտավոր գործողություններին անցնելու համար: Հեքիաթների նկարազարդումները մեծ դեր ունեն հոգեկան բոլոր գործընթացների ու հատկությունների զարգացման համար:

Երեխայի համար հեքիաթը ոչ այլ ինչ է, քան կյանքը ընկալելու, կյանքի որոշակի երևույթները, հասարակության դրվածքը հասկանալու միջոց:

«Ոչ մի խրատ, ոչ մի քարոզ և ոչ մի հորդոր օգուտ չի բերի այնքան, ինչքան հեքիաթը, քանի որ երեխան իր հոգեբանությամբ ամենից առաջ ավելի էմոցիոնալ է, իսկ հեքիաթի կերպարայնությունն ուղղված է մարդու էմոցիոնալ բնույթին» [2, 98]:

Լսելով հեքիաթը՝ դպրոցական տարիքի երեխան ցուցաբերում է առանձնահատուկ ներքին աշխուժություն՝ կարծես դառնալով նկարագրվող և ընկալվող իրադարձությունների անմիջական մասնակից: Հեքիաթը համարվում է կրթական զարգացվածության յուրահատուկ միջոց, որը երեխային դուրս է հանում անմիջական ընկալման սահմաններից՝ խորասուզելով և կողմնորոշելով նրան մարդկային վարքի լայն սահմաններում, ապահովելով հարուստ խոսակցական միջավայր:

Հեքիաթը համարվում է անհատի ձևավորման հանրամանկավարժական կարևորագույն միջոցներից մեկը: Ինչպես արդարացիորեն նշում է Լ. Ն. Լեուշինան, «Յուրաքանչյուր հեքիաթ ունի հանրամանկավարժական արդյունավետության կողմնորոշում. այն ուսուցում է, դաստիարակում է, նախազգուշացնում է, սովորեցնում է, խթանում է գործունակությունը և նույնիսկ բուժում է» [10, 65]:

Ե. Ա. Ֆլերինան նշում է նաև այնպիսի մի առանձնահատկություն, ինչպիսին մանկական ընկալման պարզամտությունն է. Երեխաները չեն սիրում, երբ պատմությունը տխուր ավարտ է ունենում, հերոսը պետք է հաջողակ լինի, քանի որ երեխան որպես կանոն իրեն պատկերացնում է

այդ հերոսի փոխարեն և մտովի պայքարում է վերջինիս թշնամիների դեմ:

Ուրեմն համարձակորեն կարելի է խոսել այն մասին, որ երեխայի՝ որպես անհատի, զարգացման գործում մեծ դեր են խաղում հեքիաթները: Նրանց շնորհիվ երեխաները վաղ հասակից սովորում են ճիշտ ընկալել երևույթների, արարքների և աշխատանքների ծավալները, հասկանալ կյանքի անհամապատասխանությունների ծիծաղելի կողմը: Յուրաքանչյուր հեքիաթում կա բարոյական խրատ, որն անհրաժեշտ է երեխային, որպեսզի վերջինս յուրացնի հասարակության մեջ վարքի անհրաժեշտ բարոյագեղագիտական չափանիշները:

Հայ առաջատար մանկավարժները միշտ էլ այն կարծիքին էին, որ հեքիաթներն ունեն դաստիարակչական և կրթական նշանակություն, և նշում էին մանկավարժական տեսության մեջ դրանց ընդարձակ կիրառության անհրաժեշտության մասին: Հայ մեծ մանկավարժ Ղ. Աղայանը հեքիաթների մասին այնպիսի բարձր կարծիք ուներ, որ դրանք ներառել էր իր մանկավարժական համակարգի մեջ: Նա կարծում էր, որ երեխաների մեջ հեքիաթներն այդպիսի մեծ հաջողություն ունեն, քանի որ ժողովրդական արվեստի անմիջականությունն ու պարզությունը համապատասխանում են մանկական հոգեբանության նույն հատկանիշներին:

Հեքիաթներն իրենց բնույթով խստորեն սահմանազատում են դրականն ու բացասականը: Երեխայի մեջ երբեք կասկած չի առաջանում այն հարցում, թե ինչպիսի վերաբերմունք պետք է ցույց տալ հեքիաթի այս կամ այն հերոսի նկատմամբ: Պահանջն արդարության նկատմամբ, կյանքում այս կամ այն անախորժությունը հաղթահարելու ձգտումը դառնում են երեխայի աշխարհընկալման մշտական և անբաժան մասը:

Կարելի է ասել, որ հեքիաթը երեխայի անհատականության զարգացման գեղագիտական և բարոյական դաստիարակության կարևոր միջոց է: Այն ազդում է բարոյական գնահատականի և գիտակցության, վարքի չափորոշիչների, գեղագիտական գիտակցության ձևավորման վրա:

Այն մասին, թե որքան կարևոր է երեխային հաղորդակից դարձնել ժողովրդական ավանդույթներին ու սովորություններին, զարգացնել երեխայի մեջ խոսքի և պատկերագրման կարողությունները, միաբերան նշում են հոգեբանները, մանկավարժները և լեզվաբանները (Կ. Դ. Ուշինսկին, Գ. Դ. Հովակիմյանը, Ն. Մ. Սակոլնիկովան, Լ. Ն. Լեուշինան, Ն. Յ. Չեռնովան, Վ. Ն. Մակսիմովան և ուրիշներ):

Հեքիաթի նկարազարդումն այնպես, ինչպես ժողովրդական գրական մյուս ստեղծագործությունները, երեխայի համար բացահայտում են հասարակական և բնական երևույթները, ինչպես նաև մարդկային զգաց-

մունքների և փոխհարաբերությունների աշխարհը: Հեքիաթը զարգացնում է երեխայի մտածողությունն ու երևակայությունը, հարստացնում է նրա հույզերը և զգացմունքները, տալիս է ստեղծագործելու անսահման հնարավորություններ:

Մեծ է հեքիաթի դաստիարակչական, գեղագիտական և ճանաչողական նշանակությունը, քանի որ ընդլայնելով արտաքին աշխարհի վերաբերյալ երեխայի գիտելիքները՝ այն ներգործում է երեխայի անհատականության վրա, զարգացնում նրա պատկերավոր մտածողությունը:

Ժողովրդական հեքիաթի միջոցով երեխան շփվում է հեղինակի՝ ժողովրդի հետ, ընկալում է նրա մտքերը և զգացմունքները: Դժվար է խորապես գնահատել երեխաների համար հեքիաթի՝ որպես ազգայինի նշանակությունը պատկերի բովանդակային ամբողջության մեջ: Հեքիաթը տալիս է պատրաստի պատկերային բնորոշ ձևեր, կերպարի կենսունակ բնութագիր, որից օգտվում է երեխան, միայն հարկավոր է դրանք ճիշտ հասկանալ և դրանցից ճիշտ օգտվել:

Իտալացի հանրահայտ հեքիաթասաց Ջանի Ռոդարին գրել է «Երևակայության քերականություն» գիրքը, որտեղ նկարագրել է այն հնարքները, որոնք նպաստում են երեխաների զարգացածությանը: Ջանի Ռոդարին ընդգծում է. «Հեքիաթների նկատմամբ երեխաները երկար ժամանակ պահպանողականություն են ցուցաբերում, նրանք չեն ցանկանում ոչինչ փոխել այդ հեքիաթներում, պնդում են, որ հեքիաթը պատմեն միևնույն ձևով և գրեթե միևնույն բառերով» [8,16]: Այնուհետև, հեղինակի կարծիքով, գալիս է մի պահ, երբ երեխաների մեջ պահանջ է ձևավորվում այդ նույն հեքիաթից ստանալ նոր տպավորություններ: Այդ ժամանակ երեխաները հեքիաթի համար նոր վերջաբան են հորինում կամ իրենց նախընտրած հերոսին օժտում են նոր հատկանիշներով, ինչը նպաստում է նրանց մեջ պատկերի փոխակերպմանը, նորի ձևավորմանը, նրանք սկսում են հասկանալ, որ կարելի է գտնել մոտ կամ հակառակ իմաստով մտքեր:

Ա. Մ. Լեուշինան արդարացիորեն հավաստում է. «Հեքիաթի կամ պատմվածքի իրավիճակի ակնառությունը ստեղծվում է ենթաշարի բառերի իմաստային բովանդակության և այն պատկերային կառուցվածքների ըմբռնմամբ, որոնց միջոցով հեղինակը կամ պատմողը ձևակերպում է իր միտքը: Այսպես երեխան վարժվում է գրական տեքստը իրեն հասկանալի կերպարներով ներկայացնելուն և հակառակը, նա ևս կամաց-կամաց սովորում է, ըստ իր սեփական պատկերացումների, կերպարներն ու նրանց ապրումները արտահայտել գրական տեքստի բովանդակությանը համապատասխան» [10,96]:

Այսպիսով՝ հեքիաթը երեխայի մեջ պահանջ է առաջացնում նոր կառուցվածքի նկատմամբ նոր պատկերի, իսկ նրա ձևը տալիս է դրա համար անհրաժեշտ օրինակներ, որոնցով երեխան ընկալում է այդ ձևն իր զարգացման ընթացքում:

Լ. Ս. Վիգոտսկին խոսում է դպրոցահասակ երեխաների մեջ պատկերային մտածողության զարգացման համար հեքիաթների կիրառման նպատակահարմարության մասին: «Հստակ ուղղություն, պարզ և հասարակ կառուցվածք, գործողության ծավալման դինամիկա, գործող անձանց ոչ մեծ քանակություն, վառ և հակադրական կերպարներ, պատկերի ռիթմայնություն և հնչեղություն» [8, 216]:

Եթե հեքիաթը համեմատենք գրական այլ ստեղծագործությունների հետ, ապա անկասկած երևան կգան հեքիաթի առավելությունները: Օրինակ՝ առասպելը ևս խոսում է կերպարների լեզվով, բայց այն հոռետեսական է, իսկ երեխաները չեն սիրում վատ ավարտներ, այդ պատճառով առասպելը չեն ընկալում որպես պատում ինչ-որ հետաքրքիր և գրավիչ երևույթի մասին:

Հաշվի առնելով ասվածը՝ առանձնացնում ենք հեքիաթների հինգ հիմնական գործառույթներ՝

1. հանրայնացման գործառույթ,
2. ստեղծագործական գործառույթ,
3. կազդուրիչ գործառույթ,
4. ազգայմշակութային գործառույթ,
5. ձևաբանական և պատկերային գործառույթ:

Հանրայնացման գործառույթը նոր սերունդներին համամարդկային և ազգային փորձին հաղորդակից դարձնելն է: Տվյալ դեպքում մարդուն օգնության է հասնում հեքիաթը և տեղաշարժում է նրա անհատական կյանքի սահմանները:

Ստեղծագործական գործառույթը բացահայտելու ունակությունն է՝ միաժամանակ ձևավորելու և իրագործելու անհատի ստեղծագործական ներուժը, նրա պատկերավոր և վերացական մտածողությունը:

Լիապատկեր գործառույթը հանդես է գալիս երեք ձևերում՝

ա) **ունակային**. որպես ունակություն՝ ցույց տալու առարկայական աշխարհը եռաչափ տարածության և ժամանակի մեջ,

բ) **ներուժային**. ներուժը գործիք դարձնել մարդու բոլոր զգայական գործարանների գործունեությանը և հիմք ընդունել գեղարվեստական մշակույթի բոլոր ձևերի և ժանրերի ստեղծման համար,

գ) **ընդհանրական**. ընդհանուրի մեջ մասնակին ներկայացնելու կարողություն ձևավորել:

Հեքիաթի կազդուրիչ գործառույթը դրսևորվում է ժողովրդի կացութաձևի, լեզվի, մտածելակերպի, նրա ավանդույթների և սովորույթների պատմական արտացոլման մեջ:

Հեքիաթի ձևաբանական գործառույթը կարողությունն է՝ ձևավորելու մարդու երևակայական մշակույթը, տիրապետումն է ժողովրադական խոսքի բազմիմաստությանը, նրա գեղարվեստական պատկերավորման հարստությանը:

Ինչպես վերևում էր նշված, հեքիաթային կերպարները որոշակի տեղեկություն են տալիս շրջապատող աշխարհի վերաբերյալ, այսինքն՝ օժտված են ճանաչողական նշանակությամբ: Կախված թեմայից և բովանդակությունից՝ հեքիաթներն ունկնդրին ստիպում են մտածել, ուղղորդում են դեպի նոր դատողություններ: Հարկ է նշել, որ հեքիաթների ճանաչողական նշանակությունը մասնավորապես տարածվում է ժողովրդական սովորույթների և ավանդույթների, նույնիսկ կենցաղային մանրուքների վրա:

Իհարկե, հեքիաթի ուսուցողական նշանակությունը կախված է նաև այն ներկայացնելու ոճից: Հմուտ ասացողները սովորաբար փորձում են օգտագործել հեքիաթի անհարժեշտ պահերը՝ պատմելու ընթացքում տալով ուղղորդող հարցեր, որը օգնում է պատկերագրմանը: Հեքիաթ նկարազարդելու կարևորագույն պայմաններից մեկը համարվում է մեծահասակի համազգացմունքային վերաբերմունքը հեքիաթին. նա հանդես է գալիս որպես երեխաներին դեպի հեքիաթների աշխարհ ուղղորդող, որպես խաղընկեր, որը երեխաների հետ միասին զարմանում, հիանում, հուսահատվում է, այսինքն՝ կերպարների հետ միասին անհանգստանում է կատարվող իրադարձությունների առթիվ:

Հեքիաթները շատ բազմազան են, այդ պատճառով դրանց ուսումնասիրումը պահանջում է հստակ դասակարգում՝ ըստ տեսակների: Հեքիաթի խնդիրների ուսումնասիրություններն այնքան էլ շատ չեն, քանի որ նախապատվությունը միշտ տրվել է հեքիաթը՝ որպես պատրաստի, ամբողջական երևույթ, դիտարկելուն: Հեքիաթների դասակարգումը սկսվել է 19-րդ դարի կեսերին: Դրանք դասակարգվել են և՛ ըստ կարգի, և՛ ըստ բովանդակության:

Հեքիաթների առաջին ուսումնասիրողներից էր Ա. Ն. Աֆանասևը: Ըստ սյուժետի՝ Ա. Ն. Աֆանասևը առանձնացնում է հեքիաթի հետևյալ տեսակները.

- շղթայագիծ հեքիաթներ,

- կենդանիների մասին հեքիաթներ,
- կախարդական հեքիաթներ,
- կենցաղային հեքիաթներ (7, 95):

Քիչ ավելի ուշ նա առաջարկել է դասակարգման նոր տարբերակ.

- հրաշալի բովանդակությամբ հեքիաթներ,
- կենցաղային հեքիաթներ,
- կենդանիների մասին հեքիաթներ:

Հաջորդ դասարակարգմամբ հեղինակը առաջարկում է հեքիաթների հետևյալ տեսակները՝

- առասպելական հեքիաթ-առակներ,
- մաքուր կախարդական հեքիաթներ,
- կենսաբանական հեքիաթներ և առակներ,
- կենդանիների մասին մաքուր առակներ,
- խրատական հեքիաթներ և առակներ,
- բարոյական առակներ:

Ըստ էության հեղինակը հեքիաթ էր համարում միայն կախարդական հեքիաթը: Նա այսպես է բնորոշում. «Կախարդական հեքիաթը պատում է, որը հիմնված է մի քանի տեսակի գործառույթների հերթականության վրա, որոնցից մի քանիսը կարող են բացակայել յուրաքանչյուր պատումի դեպքում, և կարող են առկա լինել մյուս պատումներում» [7, 102]:

Հայ մանկավարժության մեջ հանդիպում են ոչ միայն մտքեր, որոնք հեքիաթը դիտարկում են որպես դաստիարակչական և կրթական միջոց, այլև հաստատուն տեսակետեր, թե հեքիաթը մանկավարժական միջոց, մանկավարժական մեթոդ է:

Մեծ է հեքիաթների կրթական դերը: Հանդիպում ենք այնպիսի տեսակետի, որի համաձայն՝ հեքիաթի պատկերագրման մանկավարժական նշանակությունն ընկած է հուզական և գեղագիտական հարթության մեջ, բայց ոչ ճանաչողողական հարթության մեջ: Սակայն չի կարելի համաձայնել այս պնդման հետ, քանի որ ճանաչողության և հույզերի հակադրությունն արդեն իսկ արմատական սխալ է. ճանաչողությունն ու հուզական ոլորտն անբաժանելի են, քանի որ հայտնի է, որ առանց հույզերի ճշմարտության բացահայտումն անհնար է:

Կախված թեմայից և բովանդակությունից՝ հեքիաթների պատկերագրումները ստիպում են խորհել, մտորել: Երեխան երբեմն եզրակացնում է. «Կյանքում այսպես չի լինում»: Ակամայից հարց է ծագում. «Իսկ ինչպե՞ս է լինում կյանքում»: Երեխայի և ասացողի միջև ծավալված զրույցը, որն իր մեջ պարունակում է այդ հարցի պատասխանը, արդեն ունի ճանաչո-

ղական նշանակություն: Բայց հեքիաթները անմիջականորեն էլ կրում են ճանաչողական նյութ: Հարկ է նշել, որ հեքիաթի ճանաչողական նշանակությունը մասնավորապես տարածվում է ազգային ավանդույթների ու սովորույթների և նույնիսկ կենցաղային մանրուքների վրա:

Դպրոցականների համար բնութագրական է պատկերավոր մտածողությունը, և որպեսզի երեխայի երևակայությունը կերտի գունագեղ պատկեր, բնավ էլ չի պահանջվում առարկայի, նրա գործունեության ձևի մանրամասն նկարագրություն: Մարտիրոս Սարյանը կարծում էր, որ հենց սրանով է պայմանավորված երևակայական պատկերը, որը երեխայի համար շրջապատող աշխարհը ճիշտ ճանաչելու միջոց է: Հանդիպումը անսովորի, առեղծվածայինի, հեքիաթայինի հետ օգնում է ձևավորելու ընկալված զգացմունքները, տալիս է վերլուծելու և դասակարգելու, կամայական իրադրության մեջ գիտակցականը պահպանելու կարողություն, ինքնատիրապետման, գործելու ունակություն:

Հարկ է նշել, որ հեքիաթը երեխայի մեջ գալիս է վաղ հասակից և նրան ուղեկցում է ողջ կյանքի ընթացքում: Այն անհատականության ձևավորման կարևորագույն հանրամանկավարժական միջոցներից մեկն է: Հեքիաթ լսելիս և պատկերագրելիս գործում և ձևավորվում են հիմնական ստեղծագործական կարողությունները, հաղորդակցական և արտահայտչական գործառույթները:

Եզրակացություն

Հեքիաթի ձևավորման առաջադրանքները տալիս են պատրաստի կերպարի բառացի նկարագրություններ, սահմանումներ, որոնցով գործում է դպրոցականը: Կարևոր է միայն ճիշտ հասկանալ դրանք, և յուրացնելով այդ ամենը՝ կարողանալ ճիշտ կիրառել գործնականում:

Պայմանավորված նրանով, թե դպրոցականը ինչպես է կառուցում իր խոսքը, որքան կապակցված, հետաքրիր, որքան կենդանացած է պատմում և ստեղծագործում՝ կարելի է դատել նրա ստեղծագործական կարողությունների ձևավորվածության մասին և միժամանակ նրա մտավոր, գեղագիտական և հուզական զարգացածության մասին:

Դաստիարակությունը՝ հեքիաթների նկարազարդումների միջոցով, մանկավարժական բարդ գործընթաց է, որում դաստիարակության տարբեր և միմյանց միջև համաստորադասված խնդիրներն ու ուսուցումը տանում են մեկ միասնական նպատակի՝ երեխայի անհատականության բազմակողմանի զարգացվածությանն ու նրա ստեղծագործական կարողությունների ձևավորմանը:

Գրականություն

1. Աբրահամյան Դ. Ն., Գեղարվեստական ստեղծագործության առանձնահատկությունները, Երևան, 1979, 84 էջ:
2. Աղայան Ղ., Խորհրդակցություն դաստիարակության վրա, Երևան, 1967, 450 էջ:
3. Եղիազարյան Ա. Կ., Կերպարվեստը հանրակրթական դպրոցում (ԴԿԱ-ի ուսուցման օրինակով), Երևան, «Մանկավարժ» հրատ., 2002, 106 էջ:
4. Ներսիսյան Լ. Ս., Կերպարվեստը և գեղարվեստական աշխատանքը (1-3-րդ դաս.), Ձևաբանական ուղեցույց ուսուցիչների և ծնողների համար, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2002, 158 էջ:
5. Ներսիսյան Հ. Լ., Ստեղծագործական ընդունակությունների ձևավորման առանձնահատկությունները մանկական տարիքում // «Հոգեբանությունը և կյանքը» հանդես, Երևան, «Զանգակ» հրատ., 2007, 3-8 էջ:
6. Ներսիսյան Լ. Ս., Նկարել սովորելու գաղտնիքը, Երևան, «Մեկենաս» հրատ., 2019, 94 էջ:
7. Афанасев В. Г., Системность и общество, М., «Наука», 1990, 368 с.
8. Выготский Л. С., Психология искусства, М., «Современное слово», 1998, 420 с.
9. Родари Дж., Грамматика фантазии, М., 1998, 212 с.
10. Леушина Л. Н., Зрительное пространственное восприятие, М., Наука, 1978, 176 с.

Занятия по оформлению сказки как средство формирования школьных творческих способностей

Марине Галаянц

Резюме

Ключевые слова: *эстетика, воспитание, эмоции, ролевая сказка, сюжет, воображение, социализация, поведение*

В статье представлена методика формирования сказок в процессе преподавания изобразительного искусства, которая способствует формированию креативного мышления, творческого воображения и эстетических чувств школьников.

Представлены основные виды сказок, формирование которых способствует реализации интеграции литературы и изобразительного искусства, при которой школьник не только развивает свою визуализацию, соотношение добрых и злых сил, воспринимает идеалы и послания писателя в будущее, но и в своем воображении переходит в мир, представленный в сказке. Формируются умения и навыки восприятия прекрасного, его красочного представления.

Благодаря связи литературы и искусства реализуется сложный процесс, в ходе которого школьник может приобрести навыки самовыражения и управления собственным поведением в общественных отношениях, а в сфере изобразительного искусства получает навыки осознания реальных качеств палитры, фона и объекта, предметов и явлений, и воспроизведения всего перечисленного в виде картины. В процессе формирования сказки учащийся знакомится с традициями собственного народа и других народов мира, их поведенческими нормами, структурой и ролью семьи, усваивает эстетические ценности, отношение к родителям, окружению и, самое главное, к Родине.

Одним из лучших методов развития эстетического вкуса школьника является именно интегрированное обучение школьным предметам литературы и изобразительного искусства, что и считается новизной данной статьи.

Fairy Tale Design Classes as a Means of Forming School Creative Abilities

Marine Ghalayants

Summary

Key words: *aesthetics, education, emotions, role-playing fairy tale, plot, imagination, socialization, behavior.*

The article presents a method of forming fairy tales in the process of teaching fine arts, which contributes to the formation of creative thinking, creative imagination and aesthetic feelings of schoolchildren.

The main types of fairy tales are presented, the formation of which contributes to the implementation of the integration of literature and fine art, in which the student not only develops his visualization, the ratio of good and evil forces, perceives the ideals and messages of the writer to the future, but also in his imagination passes into the world represented in the fairy tale. The skills and abilities of perception of the beautiful, its colorful representation are formed.

Due to the connection of literature and art, a complex process is realized, during which a student can acquire skills of self-expression and control of one's own behavior in public relations, and in the field of fine arts the one gets skills of realizing the real qualities of the palette, background and subject, objects and phenomena, and reproducing all of the above in the form of a picture. In the process of forming a fairy tale, the student gets acquainted with the traditions of one's own people and other peoples of the world, their behavioral norms, the structure and role of the family, learns aesthetic values, attitude to parents, to the environment and, most importantly, to the Motherland.

One of the best methods of developing a student's aesthetic taste is an integrated teaching of school subjects of literature and fine arts, which is considered the novelty of this article.

Ներկայացվել է 10.10.2021 թ.
Գրախոսվել է 17.10.2021 թ.
Ընդունվել է տպագրության 29.11.2021 թ.